

Տուբերկուլոզ հիվանդությունը, դրա փոխանցման ուղիները, ախտանիշները և կանխարգելիչ միջոցները

Ի՞նչ է տուբերկուլոզը

Տուբերկուլոզը (ՏԲ) վարակիչ հիվանդություն է, որի առաջացման պատճառը տուբերկուլոզի միկոբակտերիան է (*Mycobacterium tuberculosis*): ՏԲ-ը սովորաբար ախտահարում է թոքերը, սակայն կարող է ախտահարել նաև երիկամները, ոսկորները, ողնաշարը, գլխուղեղն ու այլ օրգան-համակարգեր: ՏԲ-ը հեշտությամբ տարածվում է մեկ մարդուց մյուսին, և պետք է բուժվել: Առանց համարժեք բուժման տուբերկուլոզը կարող է հանգեցնել աշխատունակության կորստի, անկարողության և նույնիսկ մահվան:

Վարակի փոխանցման ուղիները

Հիվանդության հարուցիչները փոխանցվում են հիվանդից հետևյալ կերպ.

1. հիմնականում օդափոշային ճանապարհով՝ շնչառական ուղիներով ,
2. հազվադեպ՝ ստամոքս-աղիքնային ճանապարհով (վարակված կաթի ու կաթնամթերքի միջոցով),
3. երբեմն վարակը կարող է թափանցել վնասված մաշկից կամ լորձաթաղանթներից՝ շփման միջոցով,
4. հնարավոր է նաև պտղի ներարգանդային վարակը հիվանդ մորից՝ ընկերքի և պորտային երակի միջոցով:

Տուբերկուլոզը մեծ մասամբ տարածվում է օդի հետ ՏԲ-ի մանրէները ներս շնչելով, որոնք ՏԲ-ով հիվանդ անձանց հազալու կամ փռշտալու հետևանքով տարածվել են շրջակա օդում: Շատ մարդիկ են վարակվում ՏԲ-ի հարուցիչներով, սակայն նրանցից ոչ բոլորն են հիվանդանում (շուրջ 10%) տուբերկուլոզով: Առողջ օրգանիզմն ի գործ է պայքարել վարակի դեմ և չի հիվանդանում: Տուբերկուլոզ հիվանդությունը կամ ակտիվ տուբերկուլոզն առաջանում է այն դեպքում, երբ օրգանիզմն ներթափանցած հարուցիչները շարունակում են աճել, բազմանալ հյուսվածքներում և քայքայել ախտահարված օրգանները: Թույլ իմունիտետ և քրոնիկ հիվանդություններ ունեցողները, թերաթեք սնվողները, ծխողները, հարբեցողությամբ և թմրամուլությամբ անձինք ՏԲ-ով հիվանդանալու առումով առավել խոցելի են:

Տուբերկուլոզի ախտորոշումը

Տուբերկուլոզի ախտորոշման առաջին քայլը հիվանդի ընդհանուր զննումն է. հարցուփորձի ընթացքում կարևոր է պարզել շփման գործոնի առկայությունը, նախկինում ստացած բուժումը, խոցելի խմբերից որևէ մեկին պատկանելությունը: Մանկապատանեկան տարիքում քննության կարևոր եղևակ է տուբերկուլինային

մաշկային թեստը (կոչվում է նաև Մանթուի թեստ): Չափահասների համար կարևորվում է խորիսի մանրէաբանական քննությունը: Արդիականությունը չի կորցնում կրծքավանդակի օրգանների ճառագայթային հետազոտությունը: Ժամանակակից ախտորոշման եղանակներից են իմունաբանական, մոլեկուլային-գենետիկ հետազոտությունները, որոնք հաջողությամբ կիրառվում են Հայաստանում:

Տուբերկուլոզի ձևերը

Տարբերում են ՏԲ-ի հետևյալ ձևերը՝ թոքային և արտաթոքային: Թոքային տուբերկուլոզն իր հերթին բաժանվում է խորխով հարուցիչ արտազատող (ԲԿ+) և չարտազատող ձևերի (ԲԿ-):

Տուբերկուլոզի հիմնական ախտանիշները

Թոքերի տուբերկուլոզի հիմնական նշաններն են.

1. երեք շաբաթից ավելի տևող հազը, որը բուժման չի ենթարկվում սովորական հակաբիոտիկներով,
2. կրծքավանդակի ցավը,
3. շնչառության դժվարացումը կամ անբավարարությունը,
4. լորձային և թարախային խորխարտադրությամբ հազը, ուշ շրջաններում նաև՝ արյունախիտումը:

Ախտանշանները տարբերվում են՝ կախված այլ օրգան-համակարգերի ախտահարումից:

Ակտիվ ՏԲ-ի այլ նշաններից են.

1. հոգնածությունը,
2. ախորժակի կորուստը,
3. մարմնի զանգվածի նվազումը,
4. մարմնի ջերմաստիճանի բարձրացումը,
5. գիշերային քրտնարտադրությունը:

Տուբերկուլոզի կանխարգելումը

Մարդն ինքը պետք է ակտիվ մասնակցություն ունենա տուբերկուլոզի կանխարգելման գործում: Այն սկսվում է նորածիններին ԲՅԺ-ով պատվաստելով, որն իրականացվում է ծննդատանը: Տուբերկուլոզի կանխման առավել արդյունավետ եղանակը մանրէազատող հիվանդների ժամանակին հայտնաբերումն ու ճիշտ բուժումն է, ինչի շնորհիվ նրանք դադարում են շրջակա միջավայրում տարածել հիվանդության հարուցիչները:

Գրեթե ամեն ոք կարող է վարակվել տուբերկուլոզով: Եթե գիտեք, որ շփվել եք ՏԲ-ով հիվանդ մարդու հետ կամ, եթե առկա են վերոհիշյալ ախտանիշներից որևէ մեկը,

ապա դիմեք Ձեր բժշկին կամ տեղամասային բուժքրոջը՝ ախտորոշիչ ստուգումներ անցնելու համար:

Եթե Դուք մինչև 15 տարեկան եք և հիվանդի հետ շփման հետևանքով Ձեր մաշկային թեստը դրական է, սակայն դեռևս չեք հիվանդացել ՏԲ-ով, ապա հիվանդության կանխարգելման նպատակով բժիշկը կարող է նշանակել դեղեր՝ 6 ամիս տևողությամբ: Միննույն ժամանակ, Ձեր լավ առողջությունը և տուբերկուլոզի բակտերիայի նկատմամբ դիմադրողականությունը բարձր պահելու նպատակով, պետք է պահպանել առողջ ապրելակերպ (բավարար քուն, ֆիզիկական վարժություններ, առողջ սնունդ և այլն):

Տուբերկուլոզի բուժումը

Տուբերկուլոզի բուժման եղանակների բազմազանության մեջ առավելությունը տրվում է քիմիաթերապիային, որը հարուցիչների դեղազգայնության դեպքում տևում է 6-8 ամիս:

Հիշե՛ք.

Տուբերկուլոզը վարակիչ հիվանդություն է:

Գանգատների առկայության դեպքում պետք է դիմել տարածքային պոլիկլինիկա կամ մասնագիտացված հիվանդանոց:

Տուբերկուլոզի ախտորոշումը և բուժումն անվճար են: